պանում էին արտակարգ քաջութեամբ. մէկը միւսի յետևից ընկնում էին լաւագոյն մարտիկները՝ Մուրատը, 16րդ գումարտակի հրամանատար Արամ Դովլաթեանը, հեծելազօրի պետ Իսակը: Վիրաւորների թիւը չատ մեծ էր...

Օգոստ. 4-ին Թիւրքերը սկսեցին կենտրոնացնել իրենց ուժերը, և Հ. Ազգ. Խորհուրդը ստացաւ Մուրսել փաշայի երկրորդ, այս անգամ սպառնական, նամակը՝ քաղաքը յանձնելու պահանջով: Նոյն օր Բագու հասաւ դնդ. Ստոկսը մի քանի տասնեակ անգլիացի զինուորներով և լուր բերեց, որ իր յետևից գալու են 5000 անգլիացիներ: Այս լուրը Բագուի պաշտպաններին նոր ոյժ ներշնչեց: Եւ կռիւը շարունակւեց յուսահատ վճռականութեամբ:

Օգոստ. 4-ի գիշերը, Թիւրքերը փորձեցին պատռել բագուեցիների շղթան և օգոստ. 5-ի լուսաբացին արդէն գրաւել էին Բիբի-Հէյբաթը: Նրանց թնդանօթների ռումբերը ընկնում էի Բայիլով քաղաքամասում: Արիւնահեղ կռիւներ էին տեղի ունենում և միւս ճակատների վրա: Բագուեցիները լարում էին իրենց վերջին ճիգը: Հ. Յ. Դաշնակցութիւնը ճակատ ուղարկեց իր բոլոր ուժերը: Ռոստոմը շրջում էր դիրքից դիրք և քաջալերում կռուողներին: Հ. Ազգ. Խորհուրդը իր բոլոր անդամներով աշխատում էր առանց դադարի: Հրամանատարները անձնական քաջութեամբ թև էին տալիս մարտիկներին: Անզնահատելի ծառայութիւն էր մատուցանում և նաւերի հրետանին: Օրհասական վայրկեան էր. մա՛հ կամ ազատութիւն — ուրիշ ելք չկար:

Առաւօտեան ժամը 10-ին բագուեցիների մի զօրամաս յաջողեց անցնել Թշնամու թիկունքը. միաժամանակ հակայարձակում սկսւեց և ճակատից ու թևերից: Թիւրքերը առնուեցին երկու կրակի մէջ և, 3 ժամ յետոյ, արդէն փախչում էին գլխակորոյս՝ թողնելով մօտ 1000 դիակ, 16 գնդացիր և մեծ քանակութեամբ աւար: Շատ լուրջ էին և բագուեցիների զոհերը. 14 սպայ և 415 զինուոր սպանուած ու վիրաւոր: Սպանուեց և Համազասպի օգնականը՝ Սերգօն, Բագուի հերոսամարտի ամենափայլուն մարտիկներից մէկը: Մանր վիրաւորուածների մէջ էր Մարտին Շաթիրեանի որդին՝ ուսանող Ռուբէնը, որ թնդանօթաձիգ էր և ռումբի պայթիւնից կորցրեց մէկ ոտքը, մէկ աչքը, ծնօտը, բայց և այնպէս փրկւեց և ապագայում շարունակեց ծառայել Հայաստանի բանակում:

Օգոստ. 5-ին, երբ թշնամին արդէն փախել էր, Բագու հասան և անգլիացիները, և մինչեւ օգոստ. 19 իրենց ուժերը հասցրին 2,700-ի, որոնցից 200-ը յետ գնաց, իսկ 150—200 հոգին կռիւներում սպանուեց կամ գերի ընկաւ: Անգլիացիների գալը առաջ բերեց խիստ դժգոհութիւն Բագուի մահմետական և, մասամբ, ռուս ազգաբնակութեան ու բոլշևիկների մէջ: Քաղաքում սկսեցին երեւալ ռուսերէն կոչեր ու թռուցիկներ՝ «Կորչե՛ն հայերը», «մա՛հ հայերին», «կեցցէ՛ Թիւրքիան և Ռուսաստանը» և այլ նշանաբաններով:

Օգոստ. 5-ի կռիւներից յետոյ, աւելի քան 3 շաբաթ, տիրեց խաղաղութիւն. Թիւրքերը սպասում էին օգնական նոր ուժեր՝ պատրաստւելով վճռական գործողութեան: Սկսեցին վերակազմել ու համախմբել իրենց